

Կիրակի

ԿՐԿՆԱԶԱՏԻԿ կամ ՆՈՐ ԿԻՐԱԿԻ
Նիւթ՝ Թերահաւատ Թովմաս, Յարուցեալ
Քրիստոսը Տէր եւ Աստուած կը դաւանի
Եկեղեցւոյ Հաստատութիւնը՝ Նոր Իսրայէլ

Աւետարանի Հատուածներ (Գործք. 5:34-42, 6:1-7, Յակոբոս 3:1-12, Յովհ. 1:1-17):

• **Տէրունական Աղօթք «Հայր Մեր» եւ**
Յարուցեալ Յիսուս Փրկիչ՝ բնութեան եւ հնութեանց նորոգողն ես, զիս ալ նորոգէ, շնորհքներովդ զարդարէ:

• **Մաղմոսի ընթերցում / ուսուցում**
 [10 վայրկեան]
Մաղմոս 149

- Օրհնութիւն՝ երգեցէք Տիրոջ: Նոր երգ երգեցէ՛ք Տիրոջ, անոր հաւատարիմ մարդոց համախորմբում օրհներգութեամբ թող յորդի:

= Աստուծոյ ժողովուրդը իր Արարիչով թող ուրախանայ: Սրոնի որդիները իրենց թագաւորով թող ցնծան:

- Երգ ու պարով թող օրհներգեն անոր անունը, դափ ու քնարով թող ներբող երգեն անոր:

= Որովհետեւ Տէրը կը սիրէ իր ժողովուրդը, եւ փրկելով կը փառաւորէ խոնարհները:

- Ուստի Տիրոջ հաւատարիմ մարդիկը թող պարծենան իրենց փառքով, թող ցնծան իրենց հանգիստին մէջ:

= Աստուծոյ փառաբանութիւնը իրենց շրթներուն վրայ, եւ երկսայրի սուր մը՝ իրենց ձեռքերուն մէջ,

- Անոնք ազգերը դատաստանի պիտի ենթարկեն, պիտի պատժեն բոլոր ժողովուրդները,

= Պիտի շղթայեն անոնց թագաւորները, երկաթէ ձեռնակապերով պիտի շղթայեն անոնց մեծամեծները,

- Եւ կատարեն անոնց համար գրուած դատավճիռը: Ահա ա՛յս է Տիրոջ հաւատարիմ մարդոց փառքը: Օրհնութիւն՝ երգեցէք Տիրոջ:

• **Մաղթանք/աղօթք/ոսկեղէն համարի ուսուցում** [10 վայրկեան]

Sunday

NEW SUNDAY

Theme: Doubting Thomas confess and declares the risen Christ as Lord and God
The establishment of Christian Church as New Israel

Gospel Readings: (Acts 5:34-42, 6:1-7, James 3:1-12, John 1:1-17).

• **Lord’s Prayer and**

Resurrected Christ Savior, You are the transformer of nature and the world, renew me with Your graces.

• **Reading/ teaching of Psalms [10 minutes]**

Psalm 149

- Praise the Lord! Sing to the Lord a new song, and His praise in the assembly of saints.

= Let the faithful rejoice in their Maker; let the children of Zion be joyful in their King.

- Let them praise His name with the dance; let them sing praises to Him with drums and harps..

= For the Lord takes pleasure in His people; He will beautify the humble with salvation.

- Let the saints be joyful in glory; let them sing aloud on their beds.

= Let the high praises of God be in their mouth, and a two-edged sword in their hand,

- To execute vengeance on the nations, and punishments on the peoples;

= To bind their kings with chains, their nobles and their leaders with chains of iron;

- To execute on them the written judgment—this honor have all His saints and His worshipers. Praise the Lord!

• **Teaching of Prayer / biblical verses**
 [10 minutes]

Christ is risen from the dead! He trampled down death by death, and by His resurrection He granted life to us. Glory to Him for all ages. Amen.

Քրիստոս յարեալ ի մեռելոց մահուամբ ըզմահ կոխեաց, եւ յարութեամբն իւրով մեզ ըզկեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. Ամէն:

«Յարութենէն ետք Յիսուս իր աշակերտներուն երեւցաւ ու ըսաւ անոնց. *Նաղաղութիւն ձեզի: Ես եմ, մի՛ վախճաք:... -Ի՞նչ իրար անցեր էք եի ինչո՞ւ կասկածներ կ'ունենաք ձեր միտքերուն մէջ: Նայեցէք ձեռքերուս եւ ոտքերուս. նոյնինքն ե՛ս եմ: Շօշափեցէ՛ք զիս եւ պիտի տեսնէք որ միս ու ոսկոր ունիմ, բան մը՝ որ ոգին չ'ունենար՝» (Ղուկ. 24:36-39):*

«Յարութեան առաւօտեան ժամերէն ետք երեկոյեան՝ Յիսուս դարձեալ երեւցաւ իր աշակերտներուն, սակայն Թովմաս կը բացակայէր, եւ գանոնք ողջունելով ըսաւ. *Նաղաղութիւն ձեզի, եւ անոնց ցոյց տուաւ իր ձեռքերն ու կողրապա անոնց վրայ փչեց ու ըսաւ. Առէ՛ք Սուրբ Հոգին. եթէ մէկուն ներէք իր մեղքերը՝ թող ներուած ըլլան եւ եթէ չ'ներէք մէկուն մեղքերը՝ թող ներուած չ'ըլլան՝» (Յովհ. 20:19-23):*

«Ութը օր ետք Յիսուս դարձեալ երեւցաւ իր աշակերտներուն եւ Թովմաս ալ անոնց հետ էր: Յիսուս իր խօսքը թովմասի ուղղելով ըսաւ. *Մատդ բեր՝ հո՛ս դիր եւ տե՛ս ձեռքերս. բեր՝ ձեռքդ եւ դպցուր կողիս եւ անհաւատ մի՛ ըլլար, այլ հաւատացեալ... Թովմաս՝ զիս տեսնելով եւ շօշափելով հաւատացիր, չէ՞. երանի՛ անոնց՝ որոնք առանց զիս տեսնելու կը հաւատան՝» (Յովհ. 20:26-29):*

• **Շարականի ուսուցում** [10 վայրկեան]
Յարութեան Շարական ԱԶ

Այսօր յարեալ ի մեռելոց փեսայն անմահ է՛ւ երկնա՛ւոր. Քեզ աւե՛տի՛ք խը՛նդու՛թեան, հարսն ի յե՛րկրէ՛՝ ե՛կե՛ղեցի. օրհնեալ ի՛ ձա՛յն ցը՛նծու՛ թեա՛ն գԱստը՛ւա՛ծ քո՛ Սիո՛ն:

Այսօր անճա՛ն լոյ՛սն ի՛ լու՛սոյ՛ լու՛սաւորեաց՝ գմա՛նկու՛նը՛ս քո. լուսաւորեա՛ Ե՛րու՛սաղէմ, քանզի յարեալ չ՛ոյս քո՛ Քրի՛ստոս. օրհնեալ ի՛ ձա՛յն ցը՛նծու՛ թեա՛ն գԱստը՛ւա՛ծ քո՛ Սիո՛ն:

Քրիստոս յարեալ ի մե՛ռե՛լոց:

“After His resurrection Jesus appeared to His disciples and said to them, ‘Peace be with you. It is I Myself. Do not be terrified and frightened. ...Why do doubts arise in your hearts? Behold My hands and My feet, that it is I Myself. Handle Me and see, for a spirit does not have flesh and bones as you see I have’” (Luke 24:36-39).

“Then, the same day at evening, Jesus once again appeared to His disciples, but Thomas was not among them. So Jesus said to them, ‘Peace be with you’, and He showed them His hands and His side. Then Jesus breathed on them, and said to them, ‘Receive the Holy Spirit. If you forgive the sins of any, they are forgiven them; if you retain the sins of any, they are retained ‘” (John 20:19-23).

“And after eight days His disciples were again inside, and Thomas with them. Jesus came, the doors being shut, and stood in the midst, and said, ‘Peace to you’. Then He said to Thomas, ‘Reach your finger here, and look at My hands; and reach your hand here, and put it into My side. Do not be unbelieving, but believing’. ...‘Thomas, because you have seen Me, you have believed. Blessed are those who have not seen and yet have believed’” (John 20:26-29).

• **Teaching of ‘Sharagan’ or Spiritual hymns**
[10 minutes]

Resurrection Hymn

The Immortal and the Heavenly King today is resurrected from the dead; unto you good tidings. Oh Bride from the earth: The Church; Oh Zion, praise your God with a joyful voice.

Today the Wondrous Light, enlightened your children from the Light; be illuminated, O h Jerusalem, because your light –Christ is risen; Oh Zion praise your God with a joyful voice.

Today the darkness of ignorance was dispersed by the Triple Light; unto you rose the Light of the knowledge –the Risen Christ; Oh Zion, praise your God with a joyful voice.

Christ is risen from the dead.

Երգ Իւղարեցից

Փա՛նք յարուժեանքս Տէ՛ր. ո՛չ դադարեցայց
Քրիստոս, օր՛հնել ըզքե՛զ զամենայն աւուրս կեն-
դանութեան իմո՛յ:

Փառք յարուժեանքս, Տէ՛ր. ո՛չ դադարեցայց
Յիսուս, գո՛վել ըզքե՛զ զամենայն աւուրս կեն-
դանութեան իմո՛յ:

Ես ոչ դադարեցայց, Փը՛րկի՛չ, փա՛նաւորել
ըզքե՛զ զամենայն աւուրս կենդանութեան իմո՛յ:

Լուսապայ՛ծա՛ն հրե՛շտակըն նստելով ի կեն-
սատու՛ գե՛րեզմա՛նին. ե՛ւ աւետէր կանանցն՝
յարեա՛ւ Աստ՛ըւա՛ծ:

- **Ճաշու Աւետարանի ընթերցումէն առաջ երգել**
Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ
անմահ,

որ յարեար ի մեռելոց, ողորմեա մեզ:

Յարուժեան կիրակիներուն: (Կրկնել երեք անգամ)

- **Նախընտրաբար ըստ Տօնացոյցի կիրակի**
օրուան Ճաշու Աւետարանի ընթերցումը
կատարել եւ համապատասխան բացատրու-
թիւններ տալ: [15 վայրկեան]

- **Անդրադառնալ կրօնական-ազգային տօներուն**
[5 վայրկեան]

Յիսուսի Յարուժեան յաջորդող Նոր կիրակիին
կամ կրկնագատիկին, մեր Տէրը Յիսուս Քրիստոս,
մինչեւ իր Համբարձումը, յարուժեան յաջորդող 40
օրերու ընթացքին զանազան առիթներով ինքզինք
իր աշակերտներուն եւ հետեւորդներուն յայտնեց,
քաջալերեց եւ զանոնք իր Աւետարանին քարոզիչ-
ները եւ առաքեալները ըլլալու գործին պատրաս-
տեց: Աւետարաններու մէջ նկարագրուած եւ
ներկայացուած են Յիսուսի այս յայտնութիւնները
(Ղուկաս 24:13-35, Յովհաննէս 20: 19-23, 24-31).

Կարգ մը մարդոց համար դժուար է հաւատալ
որեւէ անտրամաբանական կամ անսովոր բանի՝
ինչպիսին էր Թովմասի պարագան: Սակայն Յի-
սուս չդատապարտեց Թովմասի թերահաւատու-
թիւնը: Յիսուս առանց յանդիմանելու փաստացի
պարզեց եւ փարատեց Թովմասի անդիտումնաւոր
իրաւացի կասկածները, որով Թովմաս անմիջապէս
խոստովանեցաւ

Hymn to Praise Christ's Resurrection

*Be praised your resurrection O Lord, for I will
bless and glorify you Christ, during all the days of
my life.*

*Be praised your resurrection O Lord, for I will
praise and glorify you Jesus, during all the days of
my life.*

*I will not cease to praise and glorify you O Sav-
ior, during all the days of my life.*

*The illuminated and bright angel seated upon
the life-spreading tomb announcing to the women
that God has risen.*

- **Before the Gospel reading students must
sing**

Trisagion 'soorp Asdvadz'

*Holy God, holy and Mighty, holy and immortal
Who did rise from the dead, have mercy upon us,
For Eastertide and for Sundays of Resurrection
(Repeat thrice).*

- **It is preferred to read the Gospel of the day.
The teacher should explain/comment on
what was read.** [10 minutes]

On this Second Easter, or New Sunday after the
Resurrection of Christ, our Lord showed Himself
to His disciples and followers on various occasions
during the forty days between His Resurrection
and Ascension, and prepared them for the task of
carrying on His work and preaching His Gospel.
He did this in each one of the appearances de-
scribed in the Gospels (Luke 24:13-35, John
20:19-23, 24-31).

For some people it is very hard to believe any-
thing that is not reasonable or that is unusual. Jesus
did not condemn Thomas for his lack of faith.
Thomas doubted honestly. Our Lord gave him
proof without rebuking him, and Thomas immedi-
ately professed his faith. But with his next words
Jesus Christ said that happy were those who could
believe even if they were not given visible proof.

անմիջապէս խոստովանեցաւ իր հաւատքը: Միաժամանակ Յիսուս երանի տուաւ բոլոր անոնց որոնք կը հաւատան՝ առանց զինք տեսած ըլլալու:

Այս Կիրակի Եկեղեցին կ'անդրադառնայ նաեւ հեթանոսներու ուղղուած հրաւերը յարութեան հաւատքը ընդունելու, միաժամանակ նորադարձ հաւատացեալներ որպէս Նոր Իսրայէլ եւ Քրիստոսի կենդանի Մարմինը՝ կը յիշատակէ Աստուծոյ հետ նոր եւ սերտ յարաբերութեան մը սկիզբը:

Եկեղեցին կամ Նոր Իսրայէլը Քրիստոսի մահուամբ եւ յարութեամբ կու գայ ժառանգելու խոստացուած փրկութիւնը եւ փոխարինելու Հին Ուխտի Երրայեցի ժողովուրդը: Որովհետեւ հրեաներ մերժեցին, ուրացան Փրկիչը եւ բնականաբար՝ զրկուեցան Աստուծոյ սիրելի անդրանիկ ազգը, ընտրեալ ժողովուրդ ըլլալու առանձնաշնորհումներէն:

Եկեղեցին այս Կիրակիին աւետարանական ընթերցումներով, մանաւանդ Յովհաննէս Աւետարանիչի միջոցաւ բարձրադաղակ կը յայտարարէ թէ Բանն Աստուած որպէս Յիսուս մարմնացաւ եւ մարդանալով մեր մէջ բնակեցաւ: Անով էր որ Աստուած ամէն ինչ ստեղծեց եւ մենք տեսանք Անոր փառքը:

- Թելադրութիւններ եւ ծանուցում— յայտարարութիւններ [5 վայրկեան]
- Կամաւոր նուէրներու հաւաք
- Կիրակնօրեայի քայլերգ
- Դասարանային աշխատանք
- Փակման/արձակման Աղօթք

ԱՂՕԹՔ

ԱՄԵՆԱԽՆԱՄ ՏԷՐ

Բոլորը խնամող Տէր, Քու սուրբ երկիւղդ պահապան դիր աչքերուս՝ որ այլեւս անառակ ու ցանկացող աչքով չնայիմ, եւ ականջներուս՝ որ հաճոյք չգգամ չար խօսքեր լսելէ, եւ բերանիս՝ որ ստույգիւն չխօսիմ, եւ սրտիս՝ որ չարութիւն չխորհիմ, եւ ձեռքերուս՝ որ անիրաւոտութիւն չգործեմ, եւ ոտքերուս՝ որ անօրէնութեան ճամբաներէն չքայլեմ:

այլ ուղղէ՛ ասոնց շարժումը,
որպէսզի միշտ Քու պատուիրաններուդ համաձայն ըլլան՝ ամէն բանի մէջ:

On this Sunday the Church also reflects on the calling of and conversion of the pagans to Christianity, which at the same time reminds us of the new relationship of God’s new people. The Christian Church, the faithful living Body of Christ, ‘The New Israel’, now with a special relationship with God had replaced Israel, the people of the Old Testament/covenant; for the children of Israel rejected and denied their Savior. Therefore, in its role of Israel, the people of the covenant/ Christian Church are now the heirs of the promise of salvation through Christ’s death and resurrection.

The Church on this Sunday, through biblical readings, and especially through the Gospel of John, strongly proclaims *Jesus as the Son of God, the Word made flesh and lived among us as Creator and Sustainer of all things, and the source of eternal life.*

- Announcements/ recommendations/ suggestions
- Collection
- Sunday School’s anthem
- Students depart to their classes
- Closing Prayer

PRAYER

ALL-CARING LORD

All-caring Lord, place Your holy fear before my eyes as a shield, that they may no longer gaze with lust; before my ears, that they may not enjoy hearing words of evil; before my mouth, that it may utter no falsehood; before my heart, that it may think of no evil; before my hands, that they may do no injustice; before my feet, that they may not walk in the path of iniquity.

But so direct their movements that they may, at all times, be according to Your commandments. Amen.

Կիրակի

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ կամ ԿԱՆԱԶ ԿԻՐԱԿԻ
Նիւթ՝ Քրիստոսի Եկեղեցւոյ հաստատումը,
ծլարձակումը եւ տարածումը: Քրիստոսով
աշխարհ եւ մարդիկ կը նորոգուին, կը
կերպարանափոխուին:

Աւետարանի հատուածներ (Ղուկաս 6:12-49,
Գործք. 9:23-31, Ա. Պետրոս 2:1-10, Յովհաննէս
2:23-25, 3:1-12, Մատթէոս 8:18-9:8, Մարկոս 3:6-
12):

- **Տէրունական Աղօթք «Հայր Մեր» եւ**
«Հաւատով խոստովանիմ եւ երկիրպագանեմ
Քեզ, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, անեղ եւ
անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց եւ
մարդկան եւ ամենայն եղբայրաց»:
(Հաւատքով կը խոստովանիմ եւ կ'երկրպագեմ
Քեզի՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, անեղ
եւ անմահ բնութիւն, արարիչը հրեշտակներուն,
մարդոց եւ բոլոր արարածներուն):
Ներսէս Շնորհալի

- **Սաղմոսի ընթերցում / ուսուցում**
[10 վայրկեան]

Սաղմոս 90: 1-12

- **Տէ՛ր, ապաստա՛ն եղար մեզի սերունդէ սե-**
րունդ:
= **Նախքան լեռներու ծնունդ առնելը, նախքան**
երկրին ու տիեզերքին գոյութեան գալը, դուն
կաս ու կը մնաս, ո՛վ Աստուած:
- **Մարդը հողին կը վերադարձնես, ըսելով. «Հո-**
դին դարձէք, աղամորդիներ»:
= **Որովհետեւ քու աչքիդ՝ հազար տարին երէկ-**
ւան պէս ակնթարթ մըն է, գիշերուան մէկ
պահուն պէս, որ արդէն իսկ անցած է:
- **Երագի պէս յանկարծակի վերջ կը դնես անոնց**
կեանքին. խոտին պէս, որ օրը օրին կը բուսնի,
= **Առաւօտուն կը ծաղկի ու կը դալարի, իրի-**
կունը կը խամրի ու կը չորնայ:
- **Այդպէս կը սպառես մեզ բարկութեամբդ, գայ-**
րոյթովդ կը վարհուրեցնես մեզ:
= **Երեւան կը հանես մեր յանցանքները, մեր**
զաղտնիքները լոյսին կը բերես:

Sunday

ASHKHARAMADRAN or GREEN SUNDAY
Theme: The Establishment of Christ’s founded
Church, the blossoming and the spread of Chris-
tianity; the renewal and transformation of the
world and humanity.

Gospel Readings: (Luke 6:12-49, Acts 9: 23-31. I
Peter 2:1-10, John 2:23-25, 3:1-12, Matt. 8:18-9:8,
Mark 3:6-12).

- **Lord’s Prayer and**
“In faith I confess and bow down to You, Fa-
ther and Son and Holy Spirit, uncreated and im-
mortal nature, creator of angels, of men and of all
things”.

Nerses Shnorhali

- **Reading/ teaching of Psalms [10 minutes]**

Psalm 90:1-12

- Lord, You have been our dwelling place in all gen-
erations.
= Before the mountains were brought forth, or ever
You had formed the earth and the world, even from
everlasting to everlasting, You are God.
- You turn man to destruction, and say, “Return, O
children of men”.
= For a thousand years in Your sight are like yester-
day when it is past, and like a watch in the night.
- You carry them away like a flood; they are like a
sleep. In the morning they are like grass which
grows up:
= In the morning it flourishes and grows up; in the
evening it is cut down and withers.
- For we have been consumed by Your anger, and
by Your wrath we are terrified.
= You have set our iniquities before You, our secret
sins in the light of Your countenance.
- For all our days have passed away in Your wrath;
we finish our years like a sigh.
= The days of our lives are seventy years; and if by
reason of strength they are eighty years, yet their
boast is only labor and sorrow; for it is soon cut off,
and we fly away;

- Սրտմտութեանդ հետեւանքով մեր օրերը կը փախչին, մեր կեանքը շուտ վերջ կը գտնէ, հառաչանքի մը նման:

= Եօթանասուն տարի է մեր կեանքին տեւողութիւնը, կամ թէ հազիւ ութսուն տարի. որ՝ լաւագոյն պարագային՝ չարչարանք է ու նեղութիւն:

- Կեանքը շուտով վերջ կը գտնէ, յաջորդ պահուն՝ արդէն չկանք:

= Ո՛վ կը ճանչնայ բարկութեանդ գորութիւնը, թէ իրապէս ի՛նչ ահարկու է գայրոյթդ:

- Սորվեցո՛ւր մեզի՝ թէ մեր օրերը համրուած են, որպէսզի սրտով իմաստուն դառնանք:

• **Մաղթանք/աղօթք/ոսկեղէն համարի ուսուցում** [10 վայրկեան]

«Ո՛վ որ կը հաւատայ Որդիին՝ յաւիտեան կեանքը կ'ունենայ. իսկ ան որ չի հնազանդիր Որդիին՝ կեանք պիտի չունենայ, այլ Աստուծոյ պատիժը պիտի գայ անոր վրայ» (Յովհաննէս 3:36):

«Ո՛վ որ իմ խօսքերս գործադրէ՝ յաւիտեան պիտի չմեռնի» (Յովհաննէս 8:51):

«Ես եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ ինծի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի: Իսկ ան որ ողջ է եւ ինծի կը հաւատայ՝ երբէք պիտի չմեռնի» (Յովհաննէս 11:25-26):

«Նոր պատուիրան մը կու տամ ձեզի.— Սիրեցէ՛ք զիրար: Ինչպէս ես ձեզ սիրեցի՝ դուք ալ զիրար սիրեցէ՛ք: Զեր իրար սիրելովն է որ մարդիկ պիտի գիտնան թէ դուք իմ աշակերտներս էք» (Յովհաննէս 13:34-35):

«Ինչ որ իմ անունովս խնդրէ՛ք՝ պիտի կատարեմ գայն» (Յովհաննէս 14:13, 14):

«Ինչ որ Հօրմէս խնդրէ՛ք իմ անունովս՝ պիտի տայ ձեզի» (Յովհ. 16:23):

«Ո՛վ որ կը սիրէ զիս՝ խօսքերս կը գործադրէ. Հայրս ալ պիտի սիրէ գայն եւ ես ու Հայրս անոր պիտի գանք եւ անոր հետ բնակինք» (Յովհաննէս 14:23):

- Who knows the power of Your anger? For as the fear of You, so is Your wrath.

= So teach us to number our days, that we may gain a heart of wisdom.

• **Teaching of Prayer / biblical verses**
[10 minutes]

“He who believes in the Son has everlasting life; and he who does not believe the Son shall not see life, but the wrath of God abides on him” (John 3:36).

“If anyone keeps My word he shall never see death” (John 8:51).

“ I am the resurrection and the life. He who believes in Me, though he may die, he shall live. And whoever lives and believes in Me shall never die” (John 11:25-26).

“ A new commandment I give to you, that you love one another; as I have loved you, that you also love one another. By this all will know that you are My disciples, if you have love for one another” (John 13:34-35).

“And whatever you ask in My name, I will do it” (John 14: 13,14).

“ Whatever you ask the Father in My name He will give you” (John 16:23).

“ If anyone loves Me, he will keep My word; and My Father will love him, and We will come to him and make Our home with him” (John 14:23).

“I God is for us who can be against us?” (Romans 8:31).

«Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի հակառակ ըլլալ» (Հռովմ.8:31):

• **Շարականի ուսուցում [10 վայրկեան]**

Յարութեան եւ Յինանց Ճաշու Շարական ԱԶ

Զթագաւորն փառաց Քրիստոս, որ վասն մե՛ր մարմնացաւ ի Սրբոյ Կուսէն եւ խաչի համբերելով, միաբանութեամբ երգո՛ւմ բարերանեացու՛ք:

Որ ըզթաղումն երեքօրեա՛յ յանձն էա՛ն, յարուցեալ ի մեռելոց իշխանութեամբ, միաբանութեամբ երգո՛ւմ բարերանեացու՛ք:

Կարողապէս ըզդրունա զըժոխո՛ց խորտակեա՛ց, եկեղեցւոյ իւրում զգեցոյ՛ց զմեծ վայելչութիւն, միաբանութեամբ երգո՛ւմ բարերանեացու՛ք:

Ճաշու Շարական ԱԶ

Յարեաւ Քրիստո՛ս ի մեռելոց. այ՛է՛ լուխա: Եկայք ժողո՛ւմովորդք, երգեցէ՛ք Տեառն. այ՛է՛ լուխա:

Յարուցելոյն ի մեռելոց, այ՛է՛ լուխա՛: Որ գաշխարհս լուսաւորեա՛ց. այ՛է՛ լուխա՛:

• **Ճաշու Աւետարանի ընթերցումէն առաջ երգել**

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ անմահ,

որ յարեար ի մեռելոց, ողորմեա մեզ: Յարութեան եւ Յինանց Կիրակիներուն: (Կրկնել երեք անգամ)

• **Նախընտրաբար ըստ Տօնացոյցի Կիրակի օրուան Ճաշու Աւետարանի ընթերցումը կատարել եւ համապատասխան բացատրութիւններ տալ: [15 վայրկեան]**

• **Անդրադառնալ կրօնական-ազգային տօներուն [5 վայրկեան]**

Ս. Յարութեան յաջորդող երրորդ Կիրակին կը կոչուի Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի:

• **Teaching of ‘Sharagan’ or Spiritual hymns [10 minutes]**

Resurrection and Eastertide Jashou Hymn

Unto the king of glory, Christ, who was for us incarnate of the holy Virgin and endured the cross, let us with one accord sing praises.

Unto him who suffered the burial of three days and rose again from the dead with power, let us with one accord sing praises.

Unto him who mightily destroyed the gates of hell, and endued his Church with majesty, let us with one accord sing praises.

Jashou Hymn

Christ is risen from the dead! Alleluia. Come ye peoples, sing unto the Lord! Alleluia. To Him that is risen from the dead, alleluia. To Him that enlightened the world, alleluia!

• **Before the Gospel reading students must sing Trisagion ‘soorp Asdvadz’**

Holy God, holy and Mighty, holy and immortal Who did rise from the dead, have mercy upon us, For Eastertide and for Sundays of Resurrection (Repeat thrice).

• **It is preferred to read the Gospel of the day. The teacher should explain/comment on what was read. [10 minutes]**

The third Sunday of Easter, known as Green Sunday (*Ganach Giragee*) and Sunday of the World Church (*Ashkharhamadoor*). The name “Green Sunday” most probably comes from an ancient folk holiday in celebration of spring. *Ashkharamadran* means universal chapel or church and reminds us of the first Christian Chapel, which was established by the apostles. Our forefathers, seeing mother earth bloom after long winter months, glorified the Creator with an act of thanksgiving, and celebrated by bedecking the Church and themselves with greenery. Green is the color of life, freshness and promise. After a barren winter we are filled with hope, life and love.

Առաջին Կաթողիկէ կամ Աշխարհամատուռ կը կոչուի առաքելական դարու եւ քրիստոնէական եկեղեցւոյ այն առաջին վայրը, ուր քրիստոնեայ հաւատացեալներ կը հաւաքուէին, միասին կ'աղօթէին, սաղմոս ու շարական կ'երգէին, Աստուածաշունչ մատեանը կը կարդային եւ վերջապէս Քրիստոսի վերջին յիշատակ՝ Հացի բեկանում կատարելով կը հաղորդուէին: Աշխարհամատրան տօնը քրիստոնէական առաջին եկեղեցւոյ հաստատման յիշատակը ըլլալով կ'առնչուի Քրիստոսի հիմնած տիեզերական ու նոր կեանքով կանաչացած, յարուստեան շունչով ծլարձակած եկեղեցւոյ: Գարնան գարթօնքին գուգաղիպող այս Կիրակիին կանաչ կոչումը բնութեան փթթումին հետ յաղթանակն է Քրիստոսի լոյս հաւատքին, նոր կրօնքին՝ որ մանանեխի հատիկի նման ուռճացաւ եւ թթիւմորի պէս ընդարձակուեցաւ, աճեցաւ եւ իր (քրիստոնէական եկեղեցւոյ) մէջ շողեց, գանգուածեց բազում ազգեր եւ ժողովուրդներ:

- Թելադրութիւններ եւ ծանուցում-յայտարարութիւններ [5 վայրկեան]
- Կամաւոր նուէրներու հաւաք
- Կիրակնօրեայի քայլերգ
- Դասարանային աշխատանք
- Փակման/արձակման Աղօթք

ԱՂՕԹՔ

ՄԱՐԴԱԽՆԱՄ ՔՐԻՍՏՈՍ

Մարդախնամ Քրիստոս, մեր մէջ բնակող քու Սուրբ Հոգիդ, բոլոր տեսակի դժուարութեանց պարագաներուն՝ մեզ կը զօրացնէ Աստուածային սիրով:
Երբ վիրաւորուինք՝ քաջութիւն կու տաս:
Երբ սրտաբեկուինք՝ կը յուսապնդես:
Երբ ընկճուած ենք՝ յարատեւելու կամք կու տաս:
Շնորհիւ մեր մէջ քու ներգոր զօրութեան՝ կրնանք համբերել եւ դիմադրել ամէն դժուարութեան:
Քեզի փառք եւ գոհութիւն մեզի ընծայած թանկագին այս պարգեւին համար:

It is also known as World Church Sunday in the sense of the church belonging to the whole world beginning with Christ and the Apostles who met regularly to pray and partake of the Holy Sacrament of Communion. Perhaps it is an appropriate time for us to remember our obligations to be good stewards of the earth and the gifts that have been given to us by God.

On this Sunday the Church commemorates the establishment in Jerusalem of the *first Christian Church*, where Christ met with the Apostles in the upper room, where our Lord established the Sacrament of the Holy Communion. This Sunday is also called ‘Green’. The name ‘green’ given to this Sunday conveys the idea of new life. By the Resurrection of our Lord, the whole world became green and flowered in order to transform the world and make fruitful the Kingdom of God.

‘Green Sunday’, the allegorical meaning given to this Sunday tend to find a resemblance between nature and the first church; the blossoming of new life in nature; the vitality, youthfulness and the flourishing; the spread of Christianity, as well as the zeal with which the Apostles were to carry Christ’s message to all the corners of the world.

- Announcements/ recommendations/ suggestions
- Collection
- Sunday School’s anthem
- Students depart to their classes
- Closing Prayer

PRAYER

CARING CHRIST

Caring Christ, your Spirit dwells within us and strengthens us with Your divine love, No matter what hardship may come upon us. When we are wounded, You give us courage. When we are disheartened, You give hope.
When we are beaten down, You give the will to carry on.
With Your strength within us, Lord, We can endure anything,
Thank You for this precious gift.

Կիրակի

ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ

**Նիւթ՝ Նահատակներու Արեամբ Մաղկած,
Մլարձակուած Քրիստոսի Եկեղեցին:**

**Աւետարանի հատուածներ (Ղուկաս 9:18-36,
Գործք Առաքելոց 13:16-43, Ա. Պետրոս 5:1-14,
Յովհաննէս 5:19-30, Մատթէոս 11:25-30, Մարկոս
4:26-34):**

- **Տէրունական Աղօթք «Հայր Մեր» եւ**
*«Արքայ երկնաւոր, տուր ինձ զարքայութիւն
 քո զոր խոստացար սիրելեաց քոց, եւ զօրացո
 զսիրտ իմ ատել զմեղս, եւ սիրել զքեզ միայն, եւ
 առնել զկամս քո. եւ ողորմեա քո արարածոց եւ
 ինձ բազմամեղիս»:*
*(Երկնաւոր թագաւոր, տո՛ւր ինձի քու արքա-
 յութիւնդ՝ զոր քեզ սիրողներուն խոստացար. եւ
 զօրացո՛ւր իմ սիրտս որպէսզի մեղքը ատեմ եւ
 միայն քե՛զ սիրեմ եւ քու կամքդ կատարեմ. եւ
 ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձի՝ բազմա-
 մեղիս):* **Ներսէս Շնորհալի**

- **Սաղմոսի ընթերցում / ուսուցում**
 [10 վայրկեան]

Սաղմոս 107: 1-3, 109:1-4,21-31

- Գոհուլթիւն յայտնեցէք Տիրոջ՝ որովհետեւ բարի
 է, որովհետեւ անոր սէրը յաւերժական է:
 = Թող «Փա՛ռք Տիրոջ» ըսեն անոնք՝ որոնք Տիրոջ
 կողմէ փրկուած են, որոնք Տէրը ինք փրկեց
 հակառակորդին ձեռքէն.
- Եւ հաւաքեց զանոնք բոլոր երկիրներէն, արե-
 ւելքէն եւ արեւմուտքէն, հիւսիսէն ու հարաւէն:
 = Կ'օրհներգե՛մ քեզ, ո՛վ Աստուած, լուռ մի՛
 մնար:
- Ամբարիշտ ու նենգաւոր մարդիկ իրենց բերա-
 նը լայն բացած՝ սուտեր կը խօսին ինձի դէմ.
 = Ատելութեամբ լեցուն խօսքերով կը պաշարեն
 զիս, առանց պատճառի հետս կը կռուին:
 - Իմ սիրոյս փոխարէն կը չարախօսեն ինձի դէմ,
 մինչ ես իրենց համար կ'աղօթեմ:
 = Բայց դուն, ո՛վ Տէր, իմ Տէ՛րս, օգնէ՛ ինձի,
 ինչպէս վայել է անունիդ. ազատէ՛ զիս, որով-
 հետեւ քաղցր ես դուն եւ ողորմած:

Sunday

RED SUNDAY

**Theme: The persecutions and the shedding of
the blood of the saints have caused the blossom-
ing and the spread of Christianity and Christ's
Church.**

**Gospel Readings: (Luke 9:18-36, Acts 13:16-43, I
Peter 5:1-14, John 5:19-30, Matthew 11:25-30,
Mark 4:26-34).**

- **Lord's Prayer** and
*“Heavenly king, grant me Your kingdom which
 You promised to Your beloved, and strengthen
 my heart to hate sin and to love You only and to
 do Your will. Have mercy upon Your creatures,
 and upon me, great sinner that I am”.*

Nerses Shnorhali

- **Reading/ teaching of Psalms [10 minutes]**

Psalm 107:1-3, 109:1-4, 21-31

- Oh, give thanks to the Lord, for He is good! For
 His mercy endures forever.
 = Let the redeemed of the :Lord say so, whom He
 has redeemed from the hand of the enemy,
 - And gathered out of the lands, from the east and
 from the west, from the north and from the south.
 = Do not keep silent, O God of my praise!
 - For the mouth of the wicked and the mouth of the
 deceitful have opened against me; they have spoken
 against me with a lying tongue.
 = They have also surrounded me with words of ha-
 tred, and fought against me without a cause.
 - In return for my love they are my accusers , but I
 give myself to prayer.
 = But You, O God the Lord, deal with me for Your
 name's sake; because Your mercy is good, deliver
 me.
 - For I am poor and needy, and my heart is wounded
 within me.
 = I am gone like a shadow when it lengthens; I am
 shaken off like a locust.
 - My knees are weak through fasting, and my flesh is
 feeble from lack of fatness.

- Վշտահար եմ ու չքաւոր, եւ վիրաւոր է սիրտս:
 = Ահա արդէն կը չքանամ իրիկնային ստուերի պէս, հովէն քշուած մարախի մը պէս:
 - Ծոմ պահելէն ծունկերս տկարացեր են, կաշի-
 ոսկոր մնացեր եմ:
 = Նախատինքի առարկայ դարձեր եմ մարդոց,
 երբ զիս կը տեսնեն՝ իրենց գլուխը կը շարժեն:
 - Օգնէ՛ ինծի, Տէ՛ր իմ Աստուած, փրկէ՛ զիս,
 դուն՝ որ համակ սէր ես:
 = Թող մարդիկ գիտնան՝ թէ դո՛ւն ըրիր ասիկա,
 թէ դո՛ւն փրկեցիր զիս, Տէ՛ր:
 - Թող անոնք անիծեն, դուն օրհնէ՛ զիս. թող
 անոնք վրաս յարձակին եւ ամօթահար ըլլան,
 իսկ ես՝ քու ծառայ, թող ուրախանամ:
 = Ամբողջովին թող խայտառակուին անոնք որ
 զիս կը չարախօսեն, եւ ամօթը վերարկուի պէս
 թող ծածկէ գանոնք:
 - Ես բարձրաձայն՝ անբաւ գոհուածիւն պիտի
 յայտնեմ Տիրոջ, եւ ժողովուրդին բազմութեան
 դիմաց իրեն օրհնութիւն պիտի երգեմ:
 = Որովհետեւ չքաւորին կողքին է միշտ անիկա,
 դատաւորներու ձեռքէն փրկելու համար գանի-
 կա:

• **Մաղթանք/աղօթք/ոսկեղէն համարի ուսու-
 ցում** [10 վայրկեան]

«Աստուած յարուցանեց Յիսուսը, որուն մար-
 մինը փտուածիւն չտեսաւ: ...Յիսուսի միջոցաւ
 մեղքերու թողութիւն կը քարոզուի ձեզի: Ո՛վ որ
 անոր կը հաւատայ՝ կ'արդարանայ իր բոլոր
 մեղքերէն, որոնցմէ չկրցաք արդարանալ Մովսէ-
 սի Օրէնքին միջոցաւ» (Գործք. 13: 37-39):

«Աստուած հակառակ է ամբարտաւաննե-
 րուն, մինչ խոնարհներուն շնորհք կու տայ» (Ա.
 Պետրոս 5:5, Առակաց 3:34):

«Արթուն եւ պատրաստ եղէք, որովհետեւ ձեր
 թշնամին՝ Սատանան առիւծի պէս մռնչելով կը
 շրջի եւ կ'սպասէ համար մէկը կը փնտռէ» (Ա.
 Պետրոս 5:8):

= I also have become a reproach to them; when they
 look at me, they shake their heads.
 - Help me, O Lord my God! Oh, save me according
 to Your mercy,
 = That they may know that this is Your hand that
 You, Lord, have done it!
 - Let them curse, but You bless; when they arise, let
 them be ashamed, but let Your servant rejoice.
 = Let my accusers be clothed with shame, and let
 them cover themselves with their own disgrace as
 with a mantle.
 - I will greatly praise the Lord with my mouth; yes, I
 will praise Him among the multitude
 = For He shall stand at the right hand of the poor, to
 save him from those who condemn him.

• **Teaching of Prayer / biblical verses**
 [10 minutes]

*“He whom God raised up saw no corrup-
 tion...through this Man (Jesus) is preached to you
 the forgiveness of sins; and by Him everyone who
 believes is justified from all things from which you
 could not be justified by the law of Moses” (Acts
 13:37-39).*

*“God resists the proud, but gives grace to the
 humble” (I Peter 5:5, Proverbs 3:34).*

*“Be sober, be vigilant; because your adversary the
 devil walks about like a roaring lion, seeking whom
 he may devour” (I Peter 5:8).*

*“Do not marvel at this; for the hour is coming in
 which all who are in the graves will hear His voice
 and come forth –those who have done good, to the
 resurrection of life, and those who have done evil, to
 the resurrection of condemnation” (John 5:28-29).*

*“We are hard pressed on every side, yet not
 crushed; we are perplexed, but not in despair; per-
 secuted, but not forsaken; struck down, but not de-
 stroyed –always carrying about in the body the dy-
 ing of the Lord Jesus, that the life of Jesus also may
 be manifested in our body” (II Corinthians 4:8-10).*

«Կու գայ ժամանակը, երբ բոլոր անոնք որոնք գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն Անոր ձայնը եւ դուրս գան. անոնք որ բարիք գործած են՝ յարուցիլն պիտի առնեն եւ ապրին, իսկ անոնք որ չարիք գործած են՝ յարուցիլն պիտի առնեն եւ դատապարտուին» (Յովհաննէս 5:28-29):

«Ամէն տեսակ նեղութիւն ունինք, բայց ընկճուած չենք. տագնապի մատնուած ենք, բայց յուսահատ չենք. հայածանքներ անպակաս են, բայց լքուած չենք. յաճախ խոշտանգուած՝ բայց խորտակուած չենք: Շարունակ Քրիստոսի մահը մեր մարմիններուն մէջ կը կրենք, որպէսզի Անոր կեանքն ալ մեր մարմիններուն մէջ յայտնուի» (Բ. Կորնթացիս 4: 8-10):

«Մի՛ պարտուիր չարէն, այլ բարիով յաղթէ չարին» (Հռովմայեցիս 12:21):

«Կ'ուզե՞ս իւշխանութենէն չվախնալ. բարիք գործէ, եւ անկէ գովասանք կը լսես» (Հռովմայեցիս 13:3):

«Մարդ ինչ որ ցանէ՝ ա՛յն կը հնձէ» (Գաղատացիս 6: 8):

«Պատրա՛ստ ըլլանք, հաւատքի եւ սիրոյ գրահը հագած, եւ փրկութեան յոյսի սաղաւարտը դրած մեր գլխուն» (Ա. Թեսաղոնիկեցիս 5:8):

«Եթէ մարմնի մարգանքները որոշ բաներու օգտակար են, աստուածապաշտութիւնը ամէ՛ն բանի օգտակար է» (Ա. Տիմոթէոս 4:8):

- **Շարականի ուսուցում** [10 վայրկեան]

Յարութեան եւ Յինանց Ճաշու Շարական ԱԿ

Թագաւորեաց Աստուած ի վերայ հե՛թա՛նո՛ւսաց, եւ լուսագարդեայ պայծառացո՛յց սուրբ գեկեղեցի՛. ժողովու՛րդք ըզՔրիստոս բարեբանե՛ցէ՛ք:

Զգեցաւ Տէր, գօրութիւ՛ն ընդ մէջ իւ՛ր է՛ած, քանզի շիջո՛յց գխայթոց մա՛հու խաչիւն իւրով

“Do not be overcome by evil, but overcome evil with good” (Romans 12:21).

“For rulers are not a terror to good works, but to evil. Do you want to be unafraid of the authority? Do what is good, and you will have praise from the same” (Romans 13:3).

“For he who sows to his flesh will of the flesh reap corruption, but he who sows to the Spirit will of the Spirit reap everlasting life” (Galatians 6:8).

“But let us who are of the day be sober, putting on the breastplate of faith and love, and as a helmet the hope of salvation” (I Thessalonians 5:8).

“For bodily exercise profits a little, but godliness is profitable for all things, having promise of the life that now is and of that which is to come” (I Timothy 4:8).

- **Teaching of ‘Sharagan’ or Spiritual hymns** [10 minutes]

Resurrection and Eastertide Jashou Hymn

God hath reigned over the nations, and hath adorned the Holy Church with light and hath made her resplendent; O ye people praise the Christ .

The Lord hath appareled himself and girded himself with strength, for he hath quenched the sting of death with his holy cross; O ye people praise the Christ.

God arose and the whole universe is adorned with new wings, and the children have partaken of the body and blood of the life-giver; O ye people praise the Christ.

սրբերո՛վ. ժողովուրդք ըզՔրիստոս բարեբա-
նե՛ցէ՛ք:

*Յարեաւ Աստուած եւ տիեզերք ամենայն
նորափեստուր զա՛րդա՛րեցան եւ մանկունք հա-
ղորդեցան մարմնոյ եւ արեան կենա՛րարի՛ն.
Ժողովուրդք ըզՔրիստոս բարեբա՛նե՛ցէ՛ք:*

• **Ճաշու Աւետարանի ընթերցումէն առաջ
երգել**

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ
եւ անմահ,

որ յարեար ի մեռելոց, ողորմեա մեզ:

Յարութեան եւ Յինանց Կիրակիներուն:
(Կրկնել երեք անգամ)

• **Նախընտրաբար ըստ Տօնացոյցի Կիրակի
օրուան Ճաշու Աւետարանի ընթերցումը
կատարել եւ համապատասխան բացատրու-
թիւններ տալ:** [15 վայրկեան]

• **Անդրադառնալ կրօնական-ազգային
տօներուն** [5 վայրկեան]

Ս. Յարութեան չորրորդ Կիրակին՝ Կարմիր
Կիրակի կը կոչուի: Կանաչ-Կարմիր յորջորջումը
ո՛չ միայն եկեղեցւոյ եւ բնութեան զարթօնքին եւ
փթթումին կը գուզադիպի, այլեւ՝ քրիստոնեայ
առաջին համայնքին դիմակալած անասելի վկա-
յութեանց, զոհողութեանց, հալածանքին, նահա-
տակութեան եւ արեան վկայութեան: Նահա-
տակներու արեան հեղումով ոռոգուեցաւ, ջրը-
ղեղուեցաւ, ծլարձակուեցաւ, ամրապնդուեցաւ,
տարածուեցաւ եւ պտղաբերուեցաւ քրիստո-
նէական եկեղեցին:

Յարութեան Կանաչ-Կարմիր Կիրակիներուն՝
եկեղեցիներու մէջ սովորութիւն էր այդ օր եկե-
ղեցական տարազները, ծածկոցներն ու վարա-
գոյնները Կանաչ Կիրակիին՝ կանա՛չ, իսկ Կար-
միր Կիրակիին՝ կարմի՛ր գոյներ գործածելը:

Իսկ «կանաչ-կարմիր կապել» հայկական ժո-
ղովրդային ասութիւնը՝ պսակի խորհուրդին ար-
ժանանալու բարեմաղթութիւնը կը փոխանցէ:

Առաջին քրիստոնեաներ՝ տուններու մէջ
աղօթք եւ պաշտամունք կը կատարէին: Իսկ
հալածանքի պատճառաւ անոնք իրենց աղօթա-

• **Before the Gospel reading students must sing
Trisagion ‘soorp Asdvadz’**

Holy God, holy and Mighty, holy and im-
mortal

*Who did rise from the dead, have mercy upon
us,*

For Eastertide and for Sundays of Resurrec-
tion (Repeat thrice).

• **It is preferred to read the Gospel of the day.
The teacher should explain/comment on what
was read.** [10 minutes]

The fourth Sunday following the Resurrection of
our Lord Jesus Christ is called Garmir Giragi (Red
Sunday), indicating sacrifices and persecutions of
the early Christians. It is said that the shedding of
the blood of the saints caused the further growth of
the tree of faith.

In the past, during the feast of Green and Red
Sundays, it was customary to use green and red col-
ors in the church. Thus the curtains of the church,
the vestments of the officiating priests, and the robes
worn by the members of the choir and other clerics
were either red or green.

In Armenian popular language “green and red”
means a rainbow, although in the Armenian lan-
guage we have a word ‘Dziadzan’ (*Ծիածան*), for
the rainbow. Another Armenian interesting custom
was, to tie green and red ribbons around the neck of
the bridegroom during his wedding ceremony by the
priest performing the rite, as a symbol of fertility. It
is also thought that the name ‘Red/Green Sunday’
may have been related to a pre-Christian spring fes-
tivities, since at that time of the year the fields were
adorned with red and green.

The ascription ‘Red’ traditionally is thought to
reflect the brilliance of red flowers, which burst
forth in bloom at this time of year symbolizing the
new life given through the blood sacrifice of Christ.

The first Christians met for prayer in their homes.
As the years went by and Christians were perse-
cuted, they began to gather secretly in caves, or un-
derground tunnels, that people in those days used as
cemeteries. These underground cemeteries were
called catacombs.

տեղիները սկսան կատարել լեռներու ծերպերու կամ գետնադամբաններու մէջ:

Շուրջ երեք հարիւր տարիներու պետական հայածանքէ ետք, երբ Կոստանդիանոս կայսր քրիստոնէական կրօնը ընդունեց, Միլանի հրովարտակով իր կայսրութեան քաղաքացիներուն կրօնական ազատութիւն շնորհեց 318 թուականին:

- Թելադրութիւններ եւ ծանուցում-յայտարարութիւններ [5 վայրկեան]
- Կամաւոր նուէրներու հաւաք
- Կիրակնօրեայի քայլերգ
- Դասարանային աշխատանք
- Փակման/ արձակման Աղօթք

ԱՂՕԹՔ

Տէր ՅԻՍՈՒՍ

*Տէր Յիսուս Քրիստոս՝
 Հիմնադիրը եւ անկիւնաքարը մեր հաւատքին,
 շնորհէ՛ որ կարենանք մեզի ընծայած
 տաղանդներդ գործածել.
 մենք՝ վրադ հաստատուած
 եկեղեցիիդ կենդանի քարերն ենք:
 Մեզի ցոյց տուր, թէ ինչպէս կարելի է որպէս
 համայնք միասնական գործել, միազանգելով
 մեր շնորհքներն ու կարողութիւնները,
 յոյսերն ու երազները,
 ստեղծելու գոյաւորելու համար կենդանի,
 ճշմարիտ Եկեղեցին որ Քեզի պիտի փառաւորէ:*

But after three hundred years of persecution, in 318 A.D. the Emperor Constantine of Rome became a Christian. With an Edict he stopped all laws punishing and persecuting Christians for their faith.

- Announcements/ recommendations/ suggestions
- Collection
- Sunday School’s anthem
- Students depart to their classes
- Closing Prayer

PRAYER

LORD JESUS

*Lord Jesus,
 Foundation of our faith,
 Inspire us to use the talents You have given us,
 The living stones of Your Church,
 To build upon You, the cornerstone.
 Show us how we can fit and work together
 As a community, combining our talents
 And energies, hopes and dreams,
 To create a living Church that will glorify You.*